ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 14*

*«09»-ը փետրվարի 2015թ.* *ք. Մարտունի*

<<Մարտունի քաղաքի Զ. Անդրանիկ թաղամաս 1/30 հասցեի 05-003-0017-0009 ծածկագրով 41,5 քմ մակերեսով ենթակայանը իր սպասարկման 0,036 հա հողամասով համայնքի կարիքների համար ետ գնելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

Հաշվի առնելով, որ Զ. Անդրանիկ թաղամասի 1/30 հասցեի ենթակայանը և իր սպասարկման հողամասով Մարտունու քաղաքապետարանը 2010 թվականի նոյեմբերի 5-ին աճուրդ- վաճառքի կարգով օտարել է, սակայն նպատակահարմար է այդ շինությունը տրամադրել որպես <<Մարտունի քաղաքային համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում>> ՀՈԱԿ-ին որպես գրասենյակային տարածք և տրանսպորտային միջոցների ու տեխնիկայի կայանատեղի, հաշվի առնելով համայնքի գերակա շահը և գույքի այժմյան սեփականատեր Արմեն Ռաֆիկի Մանուկյանի գրավոր համաձայնությունը գույքը համայնքին հետ վաճառելու համար, ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 104-րդ հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով.

## *ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է:*

Համաձայնություն տալ ք. Մարտունի, Զ. Անդրանիկի թաղամաս 1/30 հասցեի 05-003-0017-0009 ծածկագրով 41,5 քմ մակերեսով ենթակայանը իր 0,036 հա սպասարկման տարածքով որպես գերակա շահ համայնքի կարիքների համար 1800000 (մեկ միլիոն ութ հարյուր հազար) դրամով, այսինքն՝ իր օտարման արժեքով հետ գնել Մարտունի քաղաքի բնակիչ Արմեն Ռաֆիկի Մանուկյանից և այն ճանաչել համայնքային սեփականություն:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 9 դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ԶԻՐՈՅԱՆ
Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Ե. ԴԱՎԹՅԱՆ
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Վ. ՄՀԵՐՅԱՆ
Խ.ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 15-Ն*

*«09»-ը փետրվարի 2015թ.* *ք. Մարտունի*

<<Մարտունի համայնքի 2015 թվականի բյուջեի վարչական մասում փոփոխություններ կատարելու մասին>> ավագանու որոշումը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի, <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով.

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է.*

Մարտունի համայնքի 2015 թ. բյուջեի վարչական մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.Մարտունի համայնքի 2015 թ. բյուջեի վարչական մասի եկամուտները <<Ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից տրվող սուբվենցիաներ>> հոդվածով ավելացնել 1160,1 (մեկ միլիոն մեկ հարյուր վաթսուն հազար մեկ հարյուր) դրամ՝ այն դարձնելով 4267,8 (չորս միլիոն երկու հարյուր վաթսունյոթ հազար ութ հարյուր) դրամ:

2. ա) Մարտունի համայնքի 2015 թ. բյուջեի վարչական մասի ծախսերը <<Ուսուցումը երաժշտական դպրոցներում>> (բաժին 09, խումբ 01, դաս 02, ծրագիր 02) ավելացնել 1130,1 (մեկ միլիոն մեկ հարյուր երեսուն հազար մեկ հարյուր) դրամ:
բ) Գյուղատնտեսական խորհրդատվություն (բաժին 04, խումբ 02, դաս 1) նախահաշիվ 4235 հոդվածը ավելացնել 30,0 (երեսուն հազար) դրամ:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 9 դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ԶԻՐՈՅԱՆ
Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Ե. ԴԱՎԹՅԱՆ
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Վ. ՄՀԵՐՅԱՆ
Խ.ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 16-Ն*

*«09»-ը փետրվարի 2015թ.* *ք. Մարտունի*

<<Մարտունու քաղաքապետարանի վարչական շենքի գրասենյակային տարածքները վարձակալության տրամադրելու համար նոր վարձավճարի չափ սահմանելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

Համայնքի բյուջեն լրացուցիչ ֆինանսական միջոցներով համալրելու անհրաժեշտությունից ելնելով և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով.

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է.*

Համաձայնություն տալ Մարտունու քաղաքապետարանի վարչական շենքի գրասենյակային տարածքների 1 քառակուսի մետրի համար վարձավճարի չափ սահմանել 700 (յոթ հարյուր) ՀՀ դրամ:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 9 դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Ի. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ԶԻՐՈՅԱՆ
Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Ե. ԴԱՎԹՅԱՆ
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Վ. ՄՀԵՐՅԱՆ
Խ.ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 17-Ն*

*«09»-ը փետրվարի 2015թ.* *ք. Մարտունի*

<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու համաձայնություն տալու մասին>> համայնքի ավագանու 29.12.2014 թ. թիվ 86-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

Նկատի ունենալով, որ Մարտունու քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքային տնտեսության բաժնում համայնքային ծառայողների քանակը չի համապատասխանում բաժնի աշխատանքային ծանրաբեռնվածությանը, իսկ աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և ընդհանուր հարցերի բաժնում առկա է առաջին կարգի մասնագետի մեկ թափուր հաստիք և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներով.

## *ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.*

Մարտունի համայնքի ավագանու 29.12.2014 թ. թիվ 86-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. <<Կրթության, մշակույթի, սպորտի և ընդհանուր հարցերի բաժնի>> 27-րդ կետը ուժը կորցրած ճանաչել,
2. Քաղաքային տնտեսության բաժնի հաստիքացուցակը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 20.1 կետով: <<Քաղաքային տնտեսության բաժնի առաջին կարգի մասնագետ, թվաքանակը՝ 1, դրույքաչափը՝ 92000 ՀՀ դրամ, բարձր լեռնային՝ 8000 դրամ, ընդամենը՝ 100000 ՀՀ դրամ:

3.Մարտունու քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների հաստիքացուցակում փոփոխություններ կատարելու խնդրանքով դիմել ՀՀ Կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:

4. Համայնքի ավագանու 29.12.2014 թ. թիվ 86-Ն որոշման <<Տեխնիկական սպասարկումն իրականացնող աշխատակիցներ>> բաժնի 30-րդ կետի <<Անասնաբույժ>>՝ դրույքաչափը 66200 (վաթսունվեց հազար երկու հարյուր)-ի>> փոխարեն կարդալ 72800 (յոթանասուներկու հազար ութ հարյուր) դրամ:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 9 դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ԶԻՐՈՅԱՆ
Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Ե. ԴԱՎԹՅԱՆ
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Վ. ՄՀԵՐՅԱՆ
Խ.ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 18*

*«09»-ը փետրվարի 2015թ.* *ք. Մարտունի*

<<Ք. Մարտունի, Հիվանդանոցի 1-ին փողոց 82 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող 05-003-0167-0005 ծածկագրով հողամասը զոհված ազատամարտիկ Գագիկ Արմենակի Ավետիսյանի ընտանիքին անհատույց հատկացնելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով.

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է.*

Համաձայնություն տալ ք. Մարտունի, Հիվանդանոցի 1-ին փողոց 82 հասցեի 05-003-0167-005 ծածկագրով 0,0431 հա հողամասը անհատույց տրամադրել զոհված ազատամարտիկ Գագիկ Արմենակի Ավետիսյանի ընտանիքին:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 9 դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ԶԻՐՈՅԱՆ
Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Ե. ԴԱՎԹՅԱՆ
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Վ. ՄՀԵՐՅԱՆ
Խ.ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 19*

*«09»-ը փետրվարի 2015թ.* *ք. Մարտունի*

<<Ք. Մարտունի, Երևանյան փողոց 49/4 հասցեի 05-003-0510-0055 ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

Հաշվի առնելով, որ հողամասը գտնվում է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի գոտում և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի, ՀՀ հողային օրենսգրքի 48[1] հոդվածի պահանջներով.

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է.*

1. Համաձայնություն տալ կառուցապատման իրավունքով մրցութային կարգով օգտագործման տրամադրել ք. Մարտունի, Երևանյան փ. 49/4 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի ընդհանուր օգտագործման 0,00299 հա հողամասը:

2. Հողամասի վարձավճարի չափի մեկ քառակուսի մետրի համար մեկնարկային գին սահմանել 342 (երեք հարյուր քառասուներկու) դրամ:

3. Տարածքը օգտագործման տրամադրել հիսուն տարի ժամանակով:

4. Տարածքը հատկացնել հասարակական նշանակության օբյեկտի կառուցման նպատակով:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 9 դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՋԻՐՈՅԱՆ
Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Ե. ԴԱՎԹՅԱՆ
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Վ. ՄՀԵՐՅԱՆ
Խ.ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 20*

*«09»-ը փետրվարի 2015թ.* *ք. Մարտունի*

<<Ք. Մարտունի, Վ. Մամիկոնյան փողոց 7/1 հասցեի համայքային սեփականություն հանդիսացող 05-003-0402-0023 ծածկագրով հողամասը աճուրդ-վաճառքով օտարելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով.

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է.*

1. Համաձայնություն տալ աճուրդ-վաճառքով օտարելու ք. Մարտունի, Վ. Մամիկոնյան փողոց 7/1 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0,0026 հա հողամասը:

2. Հողամասի աճուրդ-վաճառքի մեկնարկային գինը մեկ քառակուսի մետրի համար սահմանել 2000 դրամ:

3. Հողամասը օտարել հասարակական նշանակության օբյեկտի կառուցման նպատակով:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 9 դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ԶԻՐՈՅԱՆ
Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Ե. ԴԱՎԹՅԱՆ
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Վ. ՄՀԵՐՅԱՆ
Խ.ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 21-Ն*

*«09»-ը փետրվարի 2015թ.* *ք. Մարտունի*

<<Մարտունի համայնքի 2015 թ. բյուջեի ֆոնդային մասի տարեսկզբի ազատ մնացորդը բաշխելու մասին>> ավագանու որոշումը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի, <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով.

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է.*

1. Մարտունի համայնքի 2015 թ. բյուջեի ֆոնդային մասի ազատ մնացորդը բաշխել հետևյալ ուղղություններով՝
ա)<<Օրենսդիր, գործադիր մարմիններ, պետական կառավարում>> նախահաշվի՝
5112 հոդված-1100000 (մեկ միլիոն հարյուր հազար) դրամ-վարչական շենքի մուտքը կառուցելու համար,
5113 հոդված-5000000 (հինգ միլիոն) դրամ - վարչական շենքի դահլիճի վերանորոգման համար,
5122 հոդված-1000000 (մեկ միլիոն) դրամ -համակարգչային տեխնիկայի գնման համար,
5134 հոդված-400000 (չորս հարյուր հազար) դրամ- նախագծային փաստաթղթերի համար,
բ)<<Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ>> նախահաշվի՝
5111-2314842 (երկու միլիոն երեք հարյուր տասնչորս հազար ութ հարյուր քառասուներկու) դրամ-շենքի գնում,
5113-10000000 (տասը միլիոն) դրամ-շենքի վերանորոգում,
5129-2000000 (երկու միլիոն) դրամ -խաչքարի գնում,
5134-300000 (երեք հարյուր հազար) դրամ -նախահաշվային փաստաթղթերի պատվիրում
5411-200000 (երկու հարյուր հազար) դրամ -հողի գնում,
գ) << Ճանապարհային տրանսպորտ>> նախահաշվի՝
5113-20000000 (քսան միլիոն) դրամ -ասֆալտապատում,
5134-460000 (չորս հարյուր վաթսուն հազար) դրամ -նախագծային աշխատանքներ,
Ընդամենը՝ 42774842 (քառասուներկու միլիոն յոթ հարյուր յոթանասունչորս հազար ութ հարյուր քառասուներկու) դրամ:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 9 դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝

Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՋԻՐՈՅԱՆ
Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Ե. ԴԱՎԹՅԱՆ
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Վ. ՄՀԵՐՅԱՆ
Խ.ԴԱՎԹՅԱՆ